

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/2

7 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Բևեռ կոմպյուտեր» ՍՊԸ 10.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 01.10.2014 թ-ի թիվ 5010285 ստուգման ակտի դեմ:

«Բևեռ կոմպյուտեր» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներից հետևում է, որ եթե վարչական վարույթի փաստերից ակնհայտ է դառնում այն, որ վարչական վարույթի ընթացքում պետք է ընդունվեր այլ վարչական ակտ, այսինքն՝ չի համապատասխանում փաստերին, ապա պետք է տվյալ վարչական ակտը անվավեր ճանաչել:

Տվյալ դեպքում տեսչության կողմից վարչական ակտում ներկայացվել է առ այն, որ որոշ հարկային հաշիվներ չեն հավաստվել կամ հավաստվել են ավելի ուշ, իսկ վարչական ակտի հիմքում դրվել է հարկային հաշիվներում առանձին տվյալների բացակայությունը: Սակայն իրականում հարկային հաշիվներում առկա չէ տվյալների բացակայություն, հետևաբար տեսչության վկայակոչած իրավական նորմերը վերաբերելի չեն: Ընկերության կողմից կատարվել են ԱԱՀ-ի գծով պարտավորությունները, սակայն ուշ է հավաստվել: Նշված պայմաններում անհիմն է տեսչության կողմից վարչական ակտում բերված հիմնավորումները:

2-րդ հիմքով սույն բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ. «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր՝ յուրաքանչյուր տարվա համար, ընդ որում, ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստացի սկսելու օրը: Ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը»:

«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով, սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր, իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառության կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ

մինչև 75 անընդմեջ աշխատանքային օր: Դրա մասին պետք է տեղեկացվի ստուգվող օբյեկտի ղեկավարին»:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ ստուգումները պետք է իրականացվեն 15 անընդմեջ աշխատանքային օրից ոչ ավել, բացառությամբ եթե չի երկարաձգվել նշված ստուգումը:

Տվյալ դեպքում Ընկերությունում ստուգումը տևել է 26 /քսանվեց/ աշխատանքային օր և ստուգումը չի երկարաձգվել, մասնավորապես՝ ստուգման երկարաձգման մասին Ընկերության տնօրենը պետական մարմնի ղեկավարի կողմից ստուգման երկարացման հանձնարարագիր չի ստացել: Հետևաբար, նշված ստուգումը կատարվել է օրենքի կոպիտ խախտմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «1. Վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 5010285 վարչական ակտը բողոքարկվում է, ուստի սույն վարչական բողոքը ներկայացնելու պահից նշված ակտի կատարումն օրենքի ուժով կասեցվում է, ինչը նշանակում է, որ չեն կարող իրականացվել ակտի կատարմանն ուղղված գործողություններ, այդ թվում՝ ընկերության դրամական միջոցների և այլ գույքի վրա արգելանք դնել:

Վերոգրյալի հիման վրա Ընկերությունը խնդրում է.

1. Անվավեր ճանաչել Արաբկիր հարկային տեսչության 01.10.2014 թ-ի թիվ 5010285 միջամտող վարչական ակտը:

2. Ձեռնպահ մնալ վերոնշյալ ակտով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների մասով ընկերության դրամական միջոցների, այդ թվում՝ բանկային հաշիվների և այլ գույքի վրա արգելանք դնելու գործողություններից:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 09.07.2014 թ-ի թիվ 5010285 հանձնարարագրի համաձայն «Բևեռ կոմպյուտեր» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 01.10.2014 թ-ի թիվ 5010285 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Սույն գործին առնչվող նյութերի և ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ ստուգման ակտը կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ստուգման ժամկետը չպետք է գերազանցի

ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով, սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր, իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառության կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ մինչև 75 անընդմեջ աշխատանքային օր:»:

Քննարկվող դեպքում ՀՀ ֆինանսների նախարարի 09.07.2014 թ-ի թիվ 5010285 հանձնարարագրով ստուգման ժամկետը սահմանվել է մինչև 15 անընդմեջ աշխատանքային օր: Հանձնարարագրի դարձերեսին կատարված գրառման համաձայն, ստուգումը փաստացի սկսվել է 07.08.2014 թ-ին: Այնուհետև, ՀՀ ֆինանսների նախարարի ժ/պ 27.08.2014 թ-ի թիվ 1561-Ա հրամանի համաձայն վերոգրյալ ստուգման ժամկետը երկարաձգվել է 10 անընդմեջ աշխատանքային օրով: Այսինքն, «Բևեռ կոմպյուտեր» ՍՊԸ-ում իրականացվող ստուգման առավելագույն ժամկետը սահմանվել է 25 անընդմեջ աշխատանքային օր:

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 01.10.2014 թ-ի թիվ 5010285 ստուգման ակտի վրա կատարված գրառման համաձայն ստուգումը կատարվել է 07.08.2014 թ-ից մինչև 11.09.2014 թ-ը: Այսինքն, ստուգման ժամկետը կազմել է ոչ թե 25 անընդմեջ աշխատանքային օր, այլ՝ 26 աշխատանքային օր:

Վերոգրյալից հետևում է, որ քննարկվող դեպքում խախտվել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ինչ վերաբերվում է ստուգման ակտով արձանագրված խախտումներին, ապա Հանձնաժողովի համոզմամբ, դրանք արձանագրվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 01.10.2014 թ-ի թիվ 5010285 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ